Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.288

The post-war situation and tourism in Syunik

Ruben Hovsepyan
https://orcid.org/0009-0004-2066-5517
Institute of Archaeology and Ethnography NAS RA
rubenhovsepyan7@gmail.com

Keywords: Syunik, border, tourism, war and conflict.

Tourism is one of the most important factors of economic development in many countries. Its role is very important in the development of small towns and rural communities, contributing not only to economic revitalization, but also to the cultural life of communities. The role of tourism is also important in the life of border settlements.

This article examines the changes in the tourism industry of the Syunik region of the Republic of Armenia as a result of the 44-day war in 2020 and the attack by Azerbaijan on the borders of the Republic of Armenia in 2021 and 2022.

As a result of the military operations carried out by Azerbaijan and the border tension in the last four years, the tourism sector of Syunik underwent negative changes. Many communities of the region became border, many historical, cultural and natural monuments and specially protected zones appeared very close to the border. Security problems developed around the region, which significantly affected the tourist inflow.

In the Syunik region, the idea of a conflict border, a border zone is prominent when warring, conflicting parties try to influence the other border section by various means, including military actions. This not only affects economic activity, but also risks creating negative perceptions around the border zone and, as a consequence, alienation.

One of the primary factors in the development of tourism is the concept of security, on the other hand, tourism is active in many conflict and border zones with security problems. As an example, we can consider Israel, the border zone between China and India, etc.

Հետպատերազմյան իրավիճակը և զբոսաշրջությունը Սյունիքում

Ռուբեն Հովսեփյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 288-295.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հիմնաբառեր՝ Սյունիք, սահման, զբոսաշրջություն, պատերազմ, կոնֆլիկտ:

Զբոսաշրջությունը տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից է բազմաթիվ երկրներում: Նրա դերը շատ կարևոր է փոքր քաղաքների, գյուղական համայնքների զարգացման գործում՝ նպաստելով ոչ միայն տնտեսական աշխուժացմանը, այլ նաև՝ համայնքների մշակութային կյանքին: Զբոսաշրջության դերը մեծ է նաև սահմանամերձ բնակավայրերի կյանքում:

Սույն հոդվածում դիտարկվում են ՀՀ Սյունիքի մարզի զբոսաշրջային ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները 2020 թվականի 44-օրյա պատերազմի և 2021 ու 2022 թվականներին Ադրբեջանի կողմից ՀՀ սահմանների վրա հարձակման հետևանքով:

Վերջին չորս տարիներին Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական գործողությունների և սահմանային լարվածության հետևանքով Սյունիքի զբոսաշրջային ոլորտը բացասական փոփոխություններ կրեց: Մարզի շատ համայնքներ դարձան սահմանամերձ, պատմամշակութային և բնական շատ հուշարձաններ և հատուկ պահպանվող գոտիներ հայտնվեցին սահմանին շատ մոտ: Մարզի շուրջ ձևավորվեցին անվտանգային խնդիրներ, ինչը զգալիորեն ազդեց զբոսաշրջային ներհոսքի վրա:

Սյունիքի մարզում ակնառու է կոնֆլիկտային սահմանի, սահմանագոտու գաղափարը, երբ պատերազմող, հակամարտող կողմերը փորձում են տարբեր միջոցներով, այդ թվում և ռազմական, ազդել մյուս սահմանային հատվածի վրա: Սա ազդում է ոչ միայն տնտեսական գործունեության վրա, այլ նաև ռիսկային է դարձնում սահմանագոտու շուրջ բացասական պատկերացումների ձևավորումը և որպես դրա հետևանք՝ օտարումը:

Զբոսաշրջության զարգացման առաջնային գործոններից է անվտանգության գաղափարը, մյուս կողմից՝ զբոսաշրջությունը ակտիվ է շատ կոնֆլիկտային և անվտանգության խնդիրներ ունեցող սահմանային գոտիներում: Որպես օրինակ կարող ենք դիտարկել Իսրայելը, Չինաստանի և Հնդկաստանի սահմանամերձ գոտին և այլն:

Послевоенная ситуация и туризм в Сюнике

Рубен Овсепян
Институт Археологии и этнографии АН РА

Ключевые слова: Сюник, граница, туризм, война, конфликт.

Туризм является одним из важнейших факторов экономического развития во многих странах. Его роль очень важна в развитии малых городов и сельских общин, способствуя не только оживлению экономики, но и культурной жизни сообществ. Роль туризма также важна в жизни приграничных поселений.

В данной статье рассматриваются изменения в туристической отрасли Сюникской области Республики Армения в результате 44-дневной войны 2020 года и нападения Азербайджана на границы Республики Армения в 2021 и 2022 годах.

В результате военных действий, проведенных Азербайджаном и приграничной напряженности за последние четыре года, туристический сектор Сюника претерпел негативные изменения. Многие населенные пункты региона стали приграничными, в непосредственной близости от границы оказались многие историко-культурные и природные памятники и особо охраняемые зоны. Вокруг региона возникли проблемы с безопасностью, что существенно повлияло на приток туристов.

В Сюникской области проявляется прослеживается понятие конфликтной границы, приграничной зоны, когда конфликтующие стороны пытаются воздействовать на другой участок границы различными способами, в том числе военными действиями. Это не только влияет на экономическую активность, но и рискует создать негативное восприятие вокруг приграничной зоны и, как следствие, отчуждение последней у общества.

Одним из основных факторов развития туризма является концепция безопасности, с другой стороны, туризм активен во многих конфликтных и приграничных зонах с проблемами безопасности. В качестве примера можно рассмотреть Израиль, приграничную зону между Китаем и Индией и т. д.

* * *

Ներածություն: Հայաստանի Հանրապետության առավել ակտիվ զբոսաշրջային ուղղություններից մեկը հարավն է, որը ներառում է Վայոց ձորի և Սյունիքի մարզերը:

Սույն հոդվածում առանձնացրել ենք Սյունիքի մարզը: Մարզը թեև Երևանից հեռու է գտնվում, սակայն զբոսաշրջային շուկայում առավել «վաճառվող» ուղղություններից մեկն է: Դրան նպաստում են մի շարք հանգամանքներ, որոնցից կառանձնացնենք հետևյալները՝ աշխարհագրական դիրքը, պատմամշակութային հարուստ ժառանգությունը, բնության հուշարձանները, հատուկ պահպանվող տարածքները, սեփական կոլորիտը պահպանած գյուղական համայնքները, լքված հին գյուղատեղիները, ինքնատիպ քաղաքային և գյուղական ճարտարապետությունը և այլն:

Սյունիքի մարզում նախքան 2020 թվականի 44-օրյա պատերազմը ակնառու էր զբոսաշրջության դրական ազդեցությունը համայնքների զարգացման գործում: Դրան նպաստել էին նաև մարզում իրականացված մի շարք ծրագրեր, որոնցից հատկապես կհիշատակենք «Տաթևեր» ճոպանուղու գործարկումը 2010 թվականին, ինչը նպաստեց դեպի մարզ այցելությունների շեշտակի աճին, ինչպես նաև գյուղական մի շարք համայնքների համար դարձավ կայուն զարգացման միջոց:

Սյունիքում զբոսաշրջության ծավալին նպաստում էր նաև դեպի Արցախ զբոսաշրջային մեծ ներհոսքի առկայությունը, ինչը պայմանավորված էր Արցախ տանող երկու մայրուղիներից մեկի՝ Գորիս-Ստեփանակերտ մայրուղու առկայությամբ, ինչպես նաև արշավային զբոսաշրջության մեջ Սյունիքի մարզի՝ Արցախի Հանրապետությանը հարող լեռնային համակարգերի ներառմամբ:

Սյունիքի մարզում հատկապես Գորիս քաղաքը դարձել էր կարևորագույն զբոսաշրջային հանգույց, իսկ մարզի բնակավայրերի համար մշակվել էր զբոսաշրջության զարգացման ռազմավարություն [Հայաստան, Հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը 2015, 84-89]: Համաձայն 2019 թվականին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի կողմից մշակված Հայաստանի 2020-2030 թվականների զբոսաշրջության ռազմավարության՝ Գորիս քաղաքը և շրջակա համայանքները համարվում էին ընդլայնվող կլաստերներ, քանի որ մեծ ներուժ ունեին Հայաստանի հարավային գոտու դարպաս դառնալու համար [Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030 2019, 69]:

Սակայն 2020 թվականի 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2021 և 2022 թվականների Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական էսկալացիայի և Ադրբեջանի հարձակման հետևանքով Սյունիքի զբոսաշրջային պատկերը զգալիորեն փոփոխվեց:

Սյունիքի մարզում զբոսաշրջությանը խոչընդոտող հիմնական գործոնը մարզի շուրջ ստեղծված անվտանգային միջավայրն է: 2020 և 2021-2022 թվականների Ադրբեջանի հետ պատերազմների հետևանքով Սյունիքում նկատելի են հետևյալ խնդիրները.

- Մարզի շատ համայնքներ Ադրբեջանի հետ դարձան սահմանային:
- Պատմամշակութային և բնական բազմաթիվ հուշարձաններ և հատուկ պահպանվող գոտիներ հայտնվեցին ռազմականացված սահմանագոտուն չափազանց մոտ:
- Մարզի շուրջ ձևավորվեցին անվտանգային խնդիրներ, որոնք պայմանավորված են Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությամբ:

Նախկինում ակտիվ զբոսաշրջային այցելություններ ունեցող վայրերը, կետերը դուրս են մնում զբոսաշրջային շուկայից, քանի որ գտնվում են սահմանին շատ մոտ: Հատկապես տուժել է արշավային տուրիզմը, լեռնագնացությունը, քանի որ Սոսու պուրակը, Իշխանասարը, Ուխտասարը և այլ վայրեր այլևս սահմանագոտի են [Արկածային զբոսաշրջությունը նոր սահմաններով]:

Սյունիքի մարզում մենք գործ ունենք ոչ թե սոսկ սահմանամերձ լինելու խնդրի հետ, այլ ռազմականացված սահմանի, սահմանագոտու, կոնֆլիկտային սահմանի գաղափարի հետ: Մարզի զբոսաշրջային ներուժ ունեցող վայրերը գտնվում են ռազմականացված սահմանի, առաջնագծի մոտ, ինչով էլ պայմանավորվում են անվտանգային խնդիրները, քանի որ այդ սահմանագոտին ճշգրտված ու կարգավորված չէ, ինչը ենթադրում է սահմանների անընդհատ փոփոխություն, անգամ աննշան տեղաշարժեր, որոնք կարող են հանգեցնել բախման: Սա փոփոխում է ոչ միայն բնապատկերը, ինչը զբոսաշրջության պարագայում բացասական է, այլ նաև անհասանելի է դարձնում զբոսաշրջային ներուժ ունեցող վայրերը: Հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հետևանքով մշտապես առկա է սահմանագոտին Ադրբեջանի կողմից ռազմական միջնորդությամբ փոփոխելու միտում:

Զբոսաշրջության վրա ազդում է սահմանի հատուկ պահպանվող լինելու գաղափարը, երբ կոնֆլիկտի հետևանքով երկու կողմերն էլ ցանկանում են լուսանկարների, տեսագրությունների միջոցով որոշակի բացասական երանգ ստեղծել մյուս կողմի համար: Այս քաղաքականության նպատակներից մեկը հակամարտող կողմերում սահմանի նկատմամբ բացասական վերաբերմունք ստեղծելն է: Սա հանգեցնում է «վտանգավոր սահմանի» գաղափարին, ինչի

բացասական դրսևորումներից է անգամ տարածքի օտարման գաղափարը, երբ այն դիտվում է վտանգավոր, հեռու մի վայր, որտեղ և որին մոտ չպետք է այցելել: Նման միջավայրի ձևավորմանը ազդում է առաջին հերթին նաև հասարակության ոչ տեղեկացված լինելը, սահմանի, այդ տարածքների մասին թյուր կարծիք ունենալը [Moze, Spiegel 2022, 3-6]: Այս խնդրի մասին բարձրաձայնում են Գորիսի և Սիսիանի համայնքների զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչները [Սյունիքի մասին հեքիաթներ են պատմում]:

Սյունիքի մարզի պարագայում ունենք նաև այսպես կոչված «խռով, ապստամբ սահմանագոտու» գաղափարը, երբ երկու պետություն փորձում են իրենց ազդեցությունը տարածել միևնույն տարածքի, գոտու, շրջանի վրա: Այս պարագայում հակառակորդ պետությունը փորձում է ամեն կերպ խաթարել սահմանագոտու բնակչության անդորրը, միասնականությունը, սահմանափակել բնակչության և սահմանագոտու միջև շփումները, ստեղծել ռիսկային միջավայր այդ թվում և տնտեսական ցանկացած գործունեության համար: 2021 և 2022 թվականների ռազմական էսկալացիայի և առանձին սահմանային բախումների հրահրումը Ադրբեջանի կողմից հենց նմանօրինակ քաղաքականության հետևանք է, ինչից զգալիորեն տուժում է և զբոսաշրջությունը [Baud, Van Schendel 1997, 228-229]:

Այս քաղաքականության հետևանքով ռիսկային է համարվում հին Խնձորեսկ հուշարձանը, իսկ Տեղ, Խնածախ և հարակից գյուղերը, որտեղ նախքան 2020 թվականը նկատելի էր զբոսաշրջության որոշակի աշխուժացում, ինչը պայմանավորված էր ավանդական ուղղությունների գերծանրաբեռնվածությամբ, ներկայումս առհասարակ ռիսկային են դիտարկվում: Այս գոտու մեջ է ընկնում նաև Գորիսը: Իհարկե, այստեղ խնդիր է նաև ինֆորմացիոն ներհոսքը, ինչի մասին նշում են տեղի զբոսաշրջության ներկայացուցիչները:

Մեկ այլ է խնդիր է լրատվական միջավայրը. ինչպես նշում են ոլորտի ներկայացուցիչները, լուրերը հաճախ չափազանցված են, կա հենց Հայաստանի ներսում իրազեկման խնդիր, քանի որ արտասահմանցիների պարագայում տուրիստական հոսքը հաստատվում է հենց մեր կողմից [Զբոսաշրջիկները խուսափում են սահմանամերձ վայրերից]:

Անվտանգային միջավայրը ազդում է Հայաստանի ընկալմանը դրսում: Սյունիքը միջազգային զբոսաշրջային քարտեզներում կարմիր գոտում է: Հակամարտություններում ընդգրկված գոտիները միջազգային զբոսաշրջային քարտեզներում սովորաբար ներառվում են կարմիր գոտիներում, ինչը նշանակում է, որ տարածաշրջանում, երկրամասում կան անվտանգային խնդիրներ: Նման քարտեզները կազմվում են երկրների արտաքին գերատեսչությունների ցուցումների հիման վրա:

Եվրոպական երկրների պարագայում առկա է Հայաստանի՝ Ադրբեջանին հարող շրջաններից շատերի կարմիր, այսինքն՝ վտանգավոր գոտում ներառելը: Կարմիր գոտում են Սյունիքի մարզը, Գեղարքունիքի մարզի՝ Ադրբեջանին սահմանակից բնակավայրերը, որոշ հատվածներ Վայոց ձորում:

Եթե անգամ երկրամասը կարմիր գոտում չէ, ապա չեն խրախուսվում այցերը: Այս քաղաքականությունը ազդում է նաև այցելությունների տոկոսային հարաբերակցության վրա: 2021 և 2022 թվականներից դրանք զգալիորեն նվազել էին, իսկ Սյունիքը հաճախ փոխարինվել է Հայաստանի այլ մարզերով՝ Լոռի, Շիրակ, Տավուշ:

Հարկ ենք համարում նշել, որ նկատվում է նաև հոսքի վերականգնում դեպի Սյունիք: Սակայն, ինչպես նշում են զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչները, զբոսաշրջային խմբերի թիվը փոքրացել է, այցելող խմբերը ավելի փոքրաթիվ են, ավելի շատ են անհատ զբոսաշրջիկները [Սյունիքում զբոսաշրջությունը սկսել է վերականգնվել]: Սրա մասին նշում են նաև մեր կողմից հարցված 20-ից ավել զբոսավարները:

Զբոսաշրջության տեղի ներկայացուցիչներն ու պատասխանատուները խնդիրների լուծումը տեսնում են տեղական բիզնեսը խրախուսելով և արտոնություններ տալով [Հայաստանի սահմամերձ զբոսաշրջային բիզնեսները], ինչպես նաև ՀՀ ԱԳՆ կողմից Եվրոպական երկրների հետ բանակցություններ վարելով՝ մարզային ուղղությունների անվտանգության պարզաբանման համար [Դեպի Սյունիք և Վայոց ձոր զբոսաշրջային հոսքը խթանելու ծրագիր կա]:

Իհարկե, սա չի նշանակում, որ կոնֆլիկտային գոտիներում զբոսաշրջություն չի կարող լինել: Հաճախ զբոսաշրջությունը համընկնում է նաև կոնֆլիկտներին, այդ թվում և միջազգային կոնֆլիկտներին: Սակայն այստեղ խնդիրը կոնֆլիկտի զարգացման և ակտիվացման փուլերի մեջ է: Մենք ունենք ակտիվ զբոսաշրջություն Իսրայելում և Պաղեստինում, Չինաստան/Հնդկաստան, Հնդկաստան/Պակիստան սահմանագոտում [Черняк 2022, 543-546]: Սակայն այստեղ մշտապես պետք է հիշել, որ զբոսաշրջության առաջնային կանոնը զբոսաշրջիկի անվտանգությունն է, հարմարավետության ապահովումը, ինչը ենթադրում է, որ անգամ կոնֆլիկտային գոտիներում պետք է լինի որոշակի կայունություն, անվտանգ ու կանխատեսելի միջավայր: Հակառակ պարագայում անգամ զբոսաշրջիկը կարող է դառնալ կոնֆլիկտի ոչ ակամա մասնակից [Сардак 2020, 54-57]: 2021-2022 թվականներին Սյունիքի մարզում մենք ունեցանք հենց այս իրավիճակները:

Նոր միտումներ

Սկսած 2021 թվականից Սյունիքում զբոսաշրջության համար գործոն է ճանապարհների փոփոխությունը, ինչի հետևանքով հիմա ակտիվանում է Սիսիան քաղաքի և նրան հարակից գյուղական համայնքների զբոսաշրջությունը: Սա պայմանավորված է մարզկենտրոն Կապան տանող նոր ճանապարհի Սիսիան-Նորավան-Շամբ-Լծեն ճանապարհահատվածի շահագործմամբ, որտեղ կարևոր դեր են ստանում Սիսիան քաղաքը և նրա համայնքները: Ուստի Սիսիանում զբոսաշրջության պատասխանատուները փորձում են ակտիվացնել այս ուղղությունը: Թեև Սիսիան քաղաքը և իր համայնքները ևս սահմանային են, սակայն անմիջապես չեն հարում առաջնագծին: Այստեղ ռիսկային է, որ սահմանագծին մոտ լինելու հետևանքով Գորիսի գյուղական համայնքները սկսում են աստիճանաբար դուրս մնալ զբոսաշրջությունից:

Ներկայումս փորձ է արվում ակտիվացնել հետևյալ ուղղությունները՝ Սիսիան քաղաք, Որոտնավանք, Որոտնաբերդ, Մելիք Թանգու կամուրջ, Շաղատ, Շաքիի ջրվեժ, Անգեղակոթ, Տոլորսի ջրամբար: Նախքան 2020 թվականը այս ուղղությունները շատ քիչ էին այցելվում՝ թերևս բացառությամբ Շաքիի ջրվեժը, Զորաց քարերը, իսկ Սիսիան քաղաքը ստվերում էր:

Կարող ենք փաստել, որ նկատվում է նաև այլ վայրերում զբոսաշրջային նոր ուղղությունների փնտրտուք: Այսպես, ակտիվացել են Որոտանի կիրճ և նրան հարող հատվածներ այցերը՝ Հարժիս, Շինուհայր, հին Խոտ, Հալիձոր: Սակայն այստեղ մենք ավելի շատ գործ ունենք արկածային զբոսաշրջության հետ: Ավելի է ակտիվացել դեպի Խուստուփ ուղղությունը: Որոշակի աշխուժացում է նկատվում դեպի Մեղրի, սակայն այս միտումները դեռ աննշան են:

Այսպիսով, կարող ենք տեսնել, որ Սյունիքի մարզում զբոսաշրջությունը մեծ վնասներ է կրել 2020 թվականի 44-օրյա պատերազմի և 2021 և 2022 թվականների Ադրբեջանի կողմից ռազմական էսկալացիայի հետևանքով, երբ զբոսաշրջային շատ վայրեր հայտնվեցին ռազմականացված սահմանագոտուն շատ մոտ, իսկ Ադրբեջանի կողմից վարած քաղաքականության հետևանքով մարզի շուրջ ձևավորվեց անվտանգային ոչ կայուն միջավայր: Միևնույն ժամանակ ստեղծված իրավիճակի հետևանքով տեղի ունեցան ենթակառուցվածքային փոփոխություններ, ինչը հանգեցրեց նաև նոր ուղղությունների ակտիվացման շուրջ աշխատանքներ տանելուն:

Գրականության ցանկ

Հայաստան. Հարավային միջանցքի ռազմավարություն, Սոցիալական, քաղաքային, գյուղական և դիմակայության գլոբալ պրակտիկա, Արևելյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան, Երևան, Համաշխարհային բանկ, 2015:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030, ՀՀ Էկոնոմիկային նախարարության Զբոսաշրջության կոմիտե, Երևան, 2019:

Moze F., Spiegel J. 2022, The aesthetic turn in border studies: Visual geographies of power, contestation and subversion, Wiley, Geography compass, 2022, pp. 17.

Baud M., Van Schendel W., 1997, Toward a Comparative History of Borderlands, Journal of World History, Vol. 8, N 2, 1997, pp. 211-242.

Черняк А. Д., 2022, Индия и Китай: территориальные конфликты и их влияние на экономические отношения, Белорусь в современном мире: Материалы 21 международной конференции, посвященной 101-ой годовщине образования Белорус. гос. ун-та, Минск, 2022, с. 542-549.

Сардак С. Э., 2020, Международные конфликты и туризм: характеристика, взаимосвязь, развитие, Материалы международной конференции, Днепр, 2020, с. 53-59.

Սյունիքում կան անվտանգության խնդիրներ, https://arm.sputniknews.ru/20220815/tatevy-gorisy-qarahunjy-khndzoreski-tshotshvogh-kamurjy--chen-kvorcrel-irenc-gravchutjuny-46649591.html, մուտք՝ 13.05.2024:

Սյունիքում զբոսաշրջությունը սկսել է վերականգնվել՝ համավարակից և պատերազմից հետո, https://www.youtube.com/watch?v=A22MCSop28g, մուտք՝ 13.05.2024:

Սյունիքի մասին հեքիաթներ են պատմում, https://www.youtube.com/watch?v=oFj_p_EOP5k, մուտք՝ 13.05.2024:

Զբոսաշրջիկները խուսափում են սահմանամերձ վայրերից, https://www.youtube.com/watch?v=Hgfkb-4G8tE, մուտք՝ 13.05.2024:

Արկածային զբոսաշրջությունը նոր սահմաններով, https://www.armgeo.am/adventure-tourism-with-new-borders/, մուտք՝ 13.05.2024:

Հայաստանի սահմանամերձ զբոսաշրջային բիզնեսները պահպանման խնդիր են լուծում, https://jam-

news.net/am/%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%B1-%D5%A6%D5%A2%D5%B8%D5%BD%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A2%D5%AB%D5%A6%D5%B6%D5%A5%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB/, մուտք՝ 13.05.2024:

Դեպի Սյունիք և Վայոց ձոր զբոսաշրջային հոսքը խթանելու ծրագիր կա, https://arm.sputniknews.ru/20230127/depi-sjuniq-ev-vajvoc-dzvor-zbvosashrjajin-hvosqy-khtanelu-tsragir-ka-divanagetnern-aneliq-unen-54431709.html, մուտք 13.05.2024: